

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ի Փ Ո Ք Ր Ե Ի Ի Մ Ե Մ Հ Ա Յ Ս

Ա Տ Ա Փ Ա Չ Ա Ր

Հեռի է յԱրմաշայ վեց ժամու աւանս այս մեծ և ընդարձակ 'ի դաշտավայրի . զի տունքն որիչք են 'ի միմեանց մեծամեծ պարտիզօք զարդարեալ . լայնարձակք են և փողոցքն , և շուկայն նորոգ շինեալ . իսկ տունք հին և հասարակ , մեծաւ մասամբ փայտաշէնք : Թէպէտ այս ամենայն աղքատութեան արդիւնք թուիցին , սակայն ամենայն ոք կարևոր պիտոյիւքն շատացեալ է , փոյթ կալեալ մըշակութեան թթենեաց վասն շերամոյ . զի և ծառայ ոք չգտանի անդանօր ըսպասարկու այլոց , լաւ համարեալ յաշխատութենէ ձեռին կեալ քան անարուեստ այլում հպատակել :

Հայոց տունք 1300 հաշուին յԱտափազար , և 4 եկեղեցիք հանդերձ չորիւք դպրոցօք . առաջին և աւագ , Հրեշտակապետ յորջորջեալ հնաշէն , առ որով և եկեղեցատուն վայելուչ . երկրորդ Սուրբ Կարապետ . երրորդ Լուսաւորիչ . չորրորդ Սուրբ Ստեփաննոս . երեքեան ևս նորաշէն , բայց սուրբ Կարապետ փառաւոր քան զայլն է և մեծ : Կիսով ժամու արտաքոյ աւանին անցանէ ջուրն Սապանճայի , որ ապա երթեալ խառնի 'ի Սագառիա . 'ի վերայ ջրոյն այնորիկ փայտեայ անիւ հաստատեալ է ահեղ մեծութեամբ , և դոյլս ագուցեալ 'ի նմա . և 'ի պըտուտիլ անուոյն 'ի բռնութենէ գետոյն՝ դոյլքն առեալ 'ի ջրոյն թափեն 'ի բարձուէ 'ի խողովակ մի , ընդ որ երթեալ ժողովի ջուրն 'ի մերձակայ ջրամբարն , և անտի այլ ստորերկրեայ խողովակաւ անցանէ յերկրորդ ջրամբար և ապա յերրորդն . և այնպէս հետզհետէ մինչև ցքաղաքն , և 'ի մէջ նորա յայլ և այլ թաղաքանզի 'ի գետոյն մինչև ցծայր քաղաքին կարգաւ ջրակշիռք կան . և այս ջուր է միայն զոր վարէ աւանն ողջոյն : Առաւ ասացաւ աւանս՝ զի երկուստեք պատեալ է 'ի ջուրց , մի 'ի նմին գետոյ , և միւս ևս 'ի Սագառիայէ որ անցանէ ընդ միւս ծայր աւանին մօտ առ Ստեփաննոս եկեղեցւոյն , և երթեալ անկանի 'ի Սեաւ ծով ինն ժամու հեռաւորութեամբ յԱտափազարէ :

Ատափազար հանէ յամին իբր 28 հազար օգգա մետաքս , հանդերձ 30 գիւղօրէիւքն , որք են Անահտարճըլար , Գարաաբախլէր , Քիրէզճէ , Էրէնլէր , Սարտօվան , Չըպըբըր , Տէրէքեօյ վերին և ստորին , Դաչըք , Պէլէճիլէր , Տօղանճըլար , Գըճըլար , Գուրտպէլլէր , Չէրչիլէր , Հասանպէյ , Չայգըլլա , Գամըլլը , Պուտաքըլար , Հաճըլար , Թօքըլար , Սարըճալար , Ագճագամըլ , Սէօյիւտլիւ , Թամլըք , Ֆէրիզլի , Եէնիքեօյ , Ֆընտըբըր , Պէլլիք գըլլա , Սապանճա , Քիւրտլէր :

Ն Ա Մ Է Ր Տ Ք Է Օ Փ Ր Ի Ի Ս Ի Ի

Մի յանուանի կամրջացն է սա Ասիոյ մեծութեամբ և հոյակապ շինուածովն . կոչի յոմանց և Մուհաննէք քեօփրիշուի . չորեքտասան կամարք են նորա . երկայնութիւնն 400 քայլ և աւելի ևս . բովանդակ շինուածն քարակերտ , ձգեալ յարևելից յարևմուտս բլրոյ 'ի բլուր : Յառաջին ծայր 'ի գլուխ կամրջին կամար կայ , և 'ի հանդիպակաց կողմն 'ի միւսն ծայր՝ այլ կամարակերտ շինուած բարձր 'ի ձև խորանի որմեալ 'ի թիկանց , և թե մի աստի և թե մի անտի կցեալ ընդ նմա : Ի ծայրէ աստի առ երրորդ կամարաւ կամրջին կան երկուստեք կցեալ այլ բազմակամար շինուածք , առ ամրութիւն կամրջին թէ առ այլ ինչ՝ չէ գուշակել . զի կամարք շինուածոյդ թէպէտ և կցեալք են յիրեար , այլ ոմն ուղղահայեաց է կամրջին , ոմն խոտորնակի և միւս ևս այլադիր . և է շինուածդ յայդմ վայրի ևեթ : Իսկ 'ի չորրորդ կամարէն սկսեալ մինչև ցառաջին ծայր կամրջին առ ամենայն միջոցորմ կամարաց երկուստեք սիւնաձև դիմարգելս եղեալ են բոլորչի ահագին թանձրութեամբ և հաւասար բարձրութեան կամրջին . որք հանդերձ հոյակապ շինուածով կամրջին տեսիլ իմն ահեղ երևեցուցանեն ամենայն անցաւորաց : Առ նոյն չորրորդ կամարան երկուստեք 'ի վերուստ կամրջին ծակ գործեալ է դէպուղիղ ընդ թանձրութիւն կամրջին , ընդ որ հազիւ մարթի միում ումեք իջանել 'ի ներքս . և չէ մարթ գուշակել թէ առ ինչ իցեն կամրջափոր խորշքդ . այս ինչ յայտնի է , զի նովին ուղղութեամբ յոտս կամարին տեսանի այլ խորշ փորը և անձուկ . և մարթ է ասել զայնոսիկ անցս արտաքին ջուրց որ 'ի վերայ կամրջին . և կամուրջն ողջոյն չունի խելս երկուստեք : Սագառիա գետ ընդ կամրջաւս անցանէր 'ի հնումն , այլ արդ ոչ ևս . և առասպելէն Տաճիկք թէ տէրվիչի ուրումն անցանել կամեցեալ ընդ կամուրջն՝ զլանայ տալ զսահմանեալ տուրս պահապանին , զանընչութիւն իւր պատճառեալ . և բռնադատեալ 'ի պահապանէն խստիւ , արկանէ զանձն 'ի գետն ասելով .

Միևնէք իշէն քօքմա կիշիւ , ալ սոշամը էլիկէ .
 Եսքմա քիչքի քեօրկեսիկտէ , գօ աւրան եէսիկ սէկի .
 Կէլմէ Նամէրտ քեօփրիշուիշուտէկն , գօ ափարսըն սոշ սէկի :

Իւ գետոյն վրէժխնդիր եղեալ մահուան առնն՝ փոխէ զընթացս իւր , իբր 'ի նզովս համարեալ զկամուրջն ընթացից իւրոց : Չէ մարթ գիտել զժամանակ փոխելոյ Սագառիայ գետոյն աստի . այժմ ընդ մի 'ի կամարաց նորա անցանէ այլ գետակ :

Կիթվի եօթն ժամ հեռի յԱտափազարէ , աւան տաճկաբնակ 'ի գաշտավայրի . 'ի բերոց նորա գլխաւորքն են մետաքս և բամբակ :

Լիվիթի աւան տաճկաբնակ . առաջի նորա անցանէ Սագառիա գետ . են 'ի նմա տունք աւելի քան զվեցհարիւր :

Պ Ի Լ Է Ճ Ի Ք

Աւան մեծ բնակեալ 'ի Տաճկաց և 'ի Հայոց . 'ի դաշտավայրէ սկսեալ և հետզհետէ խոնարհեալ ընդ այլ և այլ ձորակա յանգի յանդնդախոր լերանցամէջս . այնպէս զի թէ 'ի դազաթանց լերանցն՝ որ շրջապատեն զթաղս այնր կողմանց՝ 'ի վայր ոք հայիցի , ահիւ ըմբռնի . նմին իրի և օղն չէ առողջարար . թող զի և երթևեկացն անհնարին նեղութիւն է շրջել ընդ փողոցսն : Կրկին շուկայք են , վերին և ստորին . տունքն և կրպակքն ամենայն գծուծ : Ի հասարակաց շինուածոց երևելի է միայն Իսիէք իւսնն նորոգ շինեալ մեծ և բազմասենեակ , սակս վաճառականաց մետաքսի , որ գլխաւոր բերքն է աւանիս , և բնակիչքն սովաւ կեան մեծաւ մասամբ . մինչ զի և մուրացիկ որ ոչ գտանի անդ : Չշինութեանէ աւանիս յայսպիսի դժուարամուտ վայրի աւանդեն բնակիչքն ոչ միաբան հաւանութեամբ եղեալ նախնի բնակչացն . նմին իրի և յառակս է ասել . « Տիւնեաւ տէ ազրլ պիր օլսա , Պիլէձիքտէ փազար օլմազրտր » :

Պիլէճիկի տունք հաշուին ընդ ամենայն 760 , յորոց 532 տաճիկ , և 228 են հայազգի . սոցա երկու նորաչէն եկեղեցիք են : Մի 'ի գլխաւոր տեղեաց համարի աւանս վասն մետաքսի :

Վասն բերոց մետաքսի նշանաւոր են և գիւղօրէքն բնակեալ մեծաւ մասամբ 'ի Տաճկաց , և են սոքա . Սէլպիւք , յորում են տունք 76 . Տէրէքեօյ 96 . Ըլլփունար 32 . Չաքըր փունար 32 . Տէրէ շէմէտտին 68 . Քէփիրլէր 24 . Կեօք փունար 52 . Խըրթըլար 40 . Պէյճէ 60 . Էլլէսճէ 36 . Ճիւմալի 48 . Թէպէրլէր 12 . Սարմաշըք 16 . Պայրըր 132 . Կիւնիւք Էօրէն 56 . Վէզիր խան 176 , որոց 112 են յոյնք , Չուքուր վիրան 100 . Կիւլիւմպէ 144 . Փէլտեօլ 120 , որոց 84 յոյնք . Ապապղըք 72 . Քիւվիլիւ 688 , յորոց 440 Յոյնք . Եէնիքեօյ 84 . Գուրա քեօյ 100 . Կիւնեարըք 12 . Էօրէնքեօյ 24 . Պէքտէմիր 108 . Աշաղըքեօյ 268 , որոց 184 յոյնք . Պաշքեօյ 340 , որոց 116 յոյնք . Սալէօլ 68 :

Եօնձալը , շերմուկ հեռի 'ի Կուտինայէ երկու և կէս ժամաւ . և է բաժանեալ յերկուս լոգարանս որիչ 'ի միմեանց արանց և կանանց քարընկէց մի հեռաւորութեամբ : Վասն ջրոյ բաղանեացս ծծմբային ասեն , և է սաստիկ շերմ քան ըզմիւսոյ շերմկին որ կոչի Ըլլձա կամ Գըրլձա—ձամաւ , և չորս ժամաւ հեռի է 'ի Կուտինայէ :

Կ Ո Ւ Տ Ի Ն Ա

ԲԱՐՊՆ , ԵՒ ԳԵՏՆԱՓՈՐ ՏԵՂԻՔ . — ՔԵՕԹԱՀԵԱ ըստ Տաճկաց , քաղաք մեծ փոքուն Ասիոյ , 'ի հարաւոյ Պիլէճիքի . նախ 'ի Քարիու—եերի տեղւոյն ասեն շինեալ քաղաք , որ հեռի է յայժմեան Կուտինայէ , և կործանեալ նորա յերկրաշարժութենէ՝ շինեն ուր այժմն է . և 'ի պեղելն զհին քաղաքն գտանեն քարինս և հի-

մունս շինուածոց . այլ արտաքոյ յերեսս գետնոյն չերևի ինչ մնացորդ : Արդ կուտինացւոց քաղաքն շինեալ է 'ի ստորոտս սպառուածի լերինն՝ զոր կոչեն Աձեւ տաղը , 'ի հարթ վայրի . և առաջի նորա 'ի հիւսիսոյ և յարևելից դաշտա- վայր ընդարձակ որպէս Պրուսացւոց քաղաքին . և առաջի լերինդ այլ լեառն ապառած փոքու խորոցաւ որիչ 'ի նմանէ և կոչի Ճէպէյ Ռիւտի , յորոյ 'ի գա- գաթան է Բեթիւն բազմաթիւ խիտառխիտ և բոլորչի աշտարակօք կառուցեալ : Առաջին աշտարակն 'ի գագաթն լերինն հիմնեալ , այլք առ հասարակ զհետ գան երկուստեք մինչև ցվայր յեզր քաղաքին . զի բուն քաղաքն մեծատարած արտա- քոյ բերդին է . իսկ երես բերդին դէպուղիղ հայի 'ի վերայ քաղաքին : Յառաջին աշտարակէ անտի 120 քայլ 'ի խոնարհ պարիսպ ածեալ է , կամ թէ ասել միջն- որմն , ծայր 'ի ծայր երկուց կողմանց բերդին և դուռն 'ի նմա , որով միջոցդ ե- ուանկիւնի է ձևացեալ . և է ներքնաբերդն կամ իչ գալէ : Ի նմին վայրի երկուս- տեք դրան ներքնաբերդիդ կան երկու և երեք գետնափոր տեղիք փոքրատարած և վարկպարագի ճարտարպետութեամբ . 'ի միում յայդոցիկ գտան ամաւ յառաջ բազում նետք մեղրաչափ երկայնութեամբ և սլաք փոքրիկ երկաթի 'ի ծայր նո- ցա : Առնթեր որմոյ միջնաբերդին արտաքոյ յաջմէ նորա է դուռնն կոչեցեալ Սուշրան պաղը գաշուսու ընդ հարաւ արևմտից , զի Սուշրան պաղը ասացեալ պարտէզն յայնմ կողմանէ կայ կէս ժամաւ հեռաւորութեամբ : Ի դրանէ այտի և 'ի հանդիպոյ նորա պարիսպք բերդին շարունակեալ երկուստեք խիտ առ խիտ աշտարակօք ըստ օրինակի միջնաբերդին , ոչ ուղիղ գծիւ , այլ որպէս ինչ հի- մունք քարաժայռ լերինն ձևացեալ են , հասանեն 'ի ստորին սպառուած նորա որ տակաւին բարձր է յոյժ քան զքաղաքն . և ահա 'ի դմին տեղով է առաջին դուռն բերդին Չարչը գալիուսու կոչեցեալ և հայի ընդ հարաւ : Առնթեր դրանդ կայր երբեմն արձան առիւծու , այլ արդ ոչ ևս . և աւանդեն բնակիչքն՝ առն- թեր առիւծուն լինել ուումբ մի մեծ միջափոր և փականս գաղտնի ածեալ զնո- վաւ . զիտացեալ ուրումն թէ զինչ 'ի միջին կայցէ կամ թէ գուշակելով , խոս- սանայ գերույ իւրում ազատել զնա 'ի գերութենէ եթէ զուումբն զայն ածցէ առ ինքն , և նորա ածեալ , բանայ այրն զուումբն և գտանէ 'ի նմա ոսկի լիով . յայտնի լինին իրքն առ ամենեսեան , և այլոց ևս կարծեցեալ թէ և արձան ա- ոռիւծուն պահարան իցէ ոսկոյ , խորտակեն զայն , այլ վրիպին 'ի յուսոյ : Ի նմին բերդի հարիւրիւ չափ տունք են բնակեալ 'ի Տաճկաց :

ԲԵՐԴՆ ՓՈՔՐԻԿ . — Է և այլ բերդ փոքրիկ 'ի ձախակողմն միւսոյն 'ի նմին կար- գի պարսպաց նորա , խոնարհագոյն քան զնա և մերձ 'ի քաղաքն . չիք անցք այտի 'ի վերին բերդն . և մի դուռն է նորա որ հայի յարևելս : Յաջ կոյս խաղացեալ 'ի վայր՝ 'ի փողոցին կայ կամարաչէն տեղի մի ուստի ելանէ ջուր կոչեցեալ Աշաղը Ռիւսար փուռնարը : Իսկ արձանադիր 'ի դրունս կամ 'ի վերայ պարսպաց կրկին բերդիցդ չիք և ոչ մի :

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ ԲԱՐՔ ԲՆԱԿՉԱՅՆ . — Քան զյուրովս 'ի քաղաքաց Տաճ- կաստանի նուաստագոյն է կուտինա շինուածովք տանցն . ընդ բովանդակ քա- ղաքն հազիւ գտանին տունք երկու կամ երեք նորաչէնք , այլքն առ հասարակ հնաչէնք են և հնաձևք , անհաստատք և խարխուլք , և որմունք փողոցացն կան- զնաչափ 'ի վեր վարկպարագի քարամբք հիմնեալ , միւս մասն մինչև 'ի վեր կա-

ւակերտ : Անչքութիւն տանցդ արդիւնք է աղքատութեան քաղաքին , վկայեալ և 'ի բնակչացն . զի երևելի ինչ բերք գետնոյ և արհեստակերտ ձեռագործ չեւանէ 'ի կուտինայէ , բաց 'ի կաւեղէն անօթոց . և ոչ իսկ յաճախ երթեկեկք են կարաւանաց . նմին իրի և այլոց քաղաքաց բնակիչ անդ սակաւ և եւրոպացի ոք դուն ուրեք . յաղագս այնորիկ և բարք բնակչացն ոչ են կրեալ այլափոխութիւն , զոր օրինակ լինի յաճախ յընտանութենէ ընդ այլոց օտար ազգաց :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ . — Սովորութիւն էր այլազգեաց յաւուրս զատկի և ծննդեան հուր լուցանել 'ի գագաթն լերինն զոր Խոլլոլլը կոչեն , որ կէս ժամաւ հեռի է 'ի քաղաքէն , իբրու զի յաղտեղութենէ քրիստոնէից մաքրեալք և զտեալք անչաղախ մնասցեն . և 'ի նոյն աւուրս մանկտի նոցա եղիճ առեալ 'ի ձեռին հարկանեն ում և հանդիպին 'ի քրիստոնէից խստիւ պահանջեալ 'ի նոցանէ 'ի դուրս հանել զինչ և ունիցին 'ի ծոցի : Այլ զայս անդթութիւն խափանեաց Հաֆրզ փաշա : Է և այլ սովորութիւն տաճիկ մանկտոյն . 'ի միջոցի անդ զոր Իշլ-այլար կոչեն , յայլ և այլ խումբս կազմեալ և թմբուկ 'ի ձեռին իւրաքանչիւր պարագիւրի՝ շրջին ընդ փողոցս . իբրև անցաւոր զոք տեսանեն , թէ տաճիկ իցէ՝ աղաղակեն քեապէ , քեապէ , քեապէ , պահանջելով դրամս 'ի նոցանէ , որպէս թէ մաղթեալ վասն նոցա զի արժանի լինիցին յուխտ գնալ 'ի Քեապէ . իսկ եթէ 'ի քրիստոնէից իցէ անցաւորն բնակ և կամ օտար , աղաղակեն աձապ , աձապ , աձապ . և է Աձապն ասացեալ լեսուն մի ոչ շատ հեռի 'ի քաղաքէն , յոր ելանեն Յոյնք յաւուր տօնի Եղիայ մարգարէին պաշտօն կատարել , և քրիստոնեայն եթէ չտայցէ ինչ մանկտոյն , քարինս զկնի նորա ձգեն հայհոյութեամբ հանդերձ :

ՄՁԿԻԹՔ , ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆՔ ԱՆՕԹՈՑ . — Ութետասան մզկիթք են 'ի քաղաքին , յորոց մինն ևեթ երևելի է մեծութեամբ Ուշու ձաւի կոչեցեալ կապարապատ յարկօք : Եկեղեցիք Հայոց երեք են , Աստուածածին , սուրբ Թէոդորոս , և Լուսաւորիչ . և տունք ամենայն Հայոց 450 : — Տասնիւ չափ գործարանք կան կաւեղէն բռեալ անօթոց , որ ծանօթ են ամենայն արևելեայց . նիւթ նոցա քար է նման գայլախազի զոր ածեն 'ի մերձակայ լերանց , և յաղօրիս լոսեալ մանր և շաղեալ յօրինեն անօթս այլ և այլ ներկուածոյ . 'ի նոյն նիւթոյ են և չինի ասացեալքն 'ի ձև քառակուսի կղմնտրաչափ , կանաչագոյն զարդու , որովք պատեն զորմունս եկեղեցեաց և մզկիթաց գաւառացն այնոցիկ : Այս ձեռակերտ է միայն քաղաքին , սակաւուց ոմանց վաճառականաց առ 'ի շահ , զոր և առաքեն յայլ և այլ կողմանս Ասիոյ յորս չիցէ յաճախեալ տակաւին նոյնասեռ գործած Եւրոպիոյ :

ՊՏՂԱՐԵՐՈՒԹԻՒՆ . — Տրեան առատ է 'ի կուտինա , որ մշակի յայլ և այլ դաշտավայրս հեռի 'ի քաղաքէն , յորոց մի է և Ալքրնդալ օվաւի : Ի պտղոց անուանի է բալն զոր և չորացուցեալ առաքեն արտաքոյ : Իսկ գինի սակաւագիւտ է , զի խաղողն նախ քան զհասունանալ հարկանի 'ի ցրտոյ : Իսկ լերինքն առ հասարակ որ մօտ են քաղաքին և որ աւուրքք հեռի աստի և անտի՝ ապառած են ամենեկին անբեր , մանաւանդ արևմտեան կողմանցն . յորոց ոմանք խաւ 'ի խաւ քարինք են , ոմանք դիւրափխրելիք և սպիտակք , և այլք երկաթագոյնք անպէտ 'ի շինուած տանց : Ի լերանց անտի ելանէ և կաւ մոխրագոյն զոր վարեն փոխանակ մոխրոյ 'ի լուանալ հանդերձեղէնս :

ՅԻ ՆՈՐԱ, ԵՒ ԱԽՑՔ. — Օդ քաղաքին ցրտադին է յոյժ 'ի ձմերան, և ցրտութեանդ պատճառ զբարձրութիւն գաւառին ասեն, զոր թէպէտ և բնակն ոչ զգայ, այլ օտարն որ 'ի Բիւթանացոց գաւառէն այսր եկաւորի, միշտ ընդ զառիվերս լե-
րանց երթեալ հասանէ: Ի հիւանդութեանց աչացաւ բազում է 'ի քաղաքին մա-
նաւանդ 'ի կանայս և յօրիորդս և պատճառ ակտիդ ասեն զցոլացումն արևուն
յամարան յապառաժ լերինս, որ սպիտակք են և դիւրափշուրք, և 'ի հողմոյ և 'ի
մրրկէ 'ի փոշի լուծանին. և յերաշտութեան՝ ամենայն ճանապարհք որ ընդ լե-
րանցամէջն թզաչափ 'ի վեր փոշի են իջեալ 'ի լերանց անտի:

ՋՈՒՐՑՆ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Կուտինայի ջուրցն առատութիւն և պատուակա-
նութիւն համբաւեալ է և չկարէ ոք գովել որպէս արժանն է. թեթև, ակորժա,
համ, մաքուր, առողջարար և ցուրտ՝ ևս և յամառնային ժամանակի. մինչ զի
կարօտեալն և տանջեալն յանպիտանութենէ ջուրց Բիւթանացոց գաւառին աս-
տանօր գողցես ոգի առեալ կենդանանայ: Գլխաւորք յաղբերականց են Աշփու-
նար ժամ և կէս հեռի 'ի քաղաքէն, քաջ մարսողական, և մաքրութիւնն այնպի-
սի՝ մինչև թուել զամենայն խիճս յատակին. բխէ 'ի ներքոյ քարանց 50 տրամա-
չափ՝ թանձրութեամբ: — Ազոռ յայլ և այլ ականց բլխեալ 4 օդա թանձրու-
թեամբ, կիսով ժամաւ հեռի 'ի քաղաքէն: — Եօնձա փունարը 50 տրամաչափ,
և է անընդմիջաբար արտաքոյ քաղաքին: — Չոքոռ չէլմէ 'ի թիկանց բերդին 'ի
վերայ ճանապարհի Սուլդան պաղը պարտիզին, առողջարար հիւանդաց: — Քեօ-
վէքէ, կէս ժամ հեռի 'ի քաղաքէն բխեալ 'ի ներքուստ քարանց: — Կոնտոռվի-
րան բխեալ 'ի ներքուստ քարանց յերից և 'ի չորից ականց վճիտ և ցուրտ: — Ը-
լլձա կամ Գրլլձա հաւնաւ չէլմէսի. առ որ մերձ է միով քառորդաւ և այլ ջուր
ի նձիրի ասացեալ: — Օլոռձաք, հեռի 'ի նոյն Ըլլձայէ քառորդ մի: — Էլմալը
փոռնար նոյնաչափ հեռաւորութեամբ 15 տրամաչափ: — Ասրլխաս. հինգ վայր-
կենիւ հեռի 'ի նոյն Ըլլձայէ. ելանէ իբր 'ի տասն ականց 'ի փոքր վայրէ 'ի քա-
րանց, յորոց ոմանք ջերմ են և այլք ցուրտ, որք խառնին ապա 'ի մի աւազան
բարեխառնեալ անդ: — Չաքալ չէլմէ և Ուլոռ ձամի սոչոռ 'ի քաղաքին և այլք:

Մ Ի Ջ Ա Տ Ք

է

Բնագոյումն առաջնորդ միջատաց:

Յանկարծ՝ ընկերս, խլուրդն սւր է,
կանչեց:

Դարձուցի աչուրներս նայեցայ. բայց
քարէն 'ի զատ, որուն վրայ պառկեցու-

ցած էինք, ուրիշ բան չտեսայ: Երևա-
կայեցէք զարմանքնիս. կարծէինք որ
կենդանին արեգական ջերմութեամբը
ոգի ստացած, յարութիւն առեր էր,
ու աճապարեր էր իրեն ստորերկրեայ
բնակարանը ամփոփուելու: Ուրիշ մեկ-
նութիւն չէինք կրնար տալ իրեն:

Ոտք ելանք որ իբր մօտանց ստու-
գենք. ինչպէս զարմացանք երբոր քա-
րէն չորս հինգ քայլ հեռու տեսանք

1. Սովորական ոճ է կողմանց Ասիոյ 'ի բացա-
արել զյորդութիւն և զնուազութիւն ջուրց աղբե-
րացն, իմանալ զխողովակ կամ զուղղաձիգ ծորակ

աղբեր. ընդ որ անցանիցէ ճշգիւ կապարեայ գունտ
որոյ ծանրութիւնն իցէ 50 տրամաչափ. ըստ նմին
իմանալի է և զայլ տրամաչափս: